ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

1997 թվականի հունվարի 17-ի՝ «Բջջային շարժական կապի համակարգերի զարգացման և օգտագործման բնագավառում համագործակցության մասին» ԱՊՀ արձանագրության կնքման նպատակահարմարության մասին

Հաշվի առնելով, հեռահաղորդակցության ոլորտում առկա տեխնոլոգիական գործընթացների և տեխնիկական միջոցների դինամիկ զարգացումները, ինչպես նաև ժամանակակից շուկայի պահանջները անհրաժեշտություն է առաջացել որոշակի փոփոխություններ կատարել 1997 թվականի հունվարի 17-ին քաղաք Մոսկվայում կնքված «Բջջային շարժական կապի համակարգերի օգտագործման և զարգացման բնագավառում համագործակցության մասին» ԱՊՀ համաձայնագրում՝ համապատասխանեցնելով առդի չափանիշներին:

Սույն Արձանագրության նախագիծը նախատեսում է ընդլայնել ԱՊՀ անդամ-պետությունների բջջային շարժական կապի ոլորտում համագործակցության շրջանակը: Օգտագործելով ժամանակակից թվային ռադիոկապի ստանդարտները հնարավորություն է ընձեռնվում բաժանորդներին առաջարկել շարժական կապի նոր ծառայություններ:

Առաջարկվող փոփոխությունները նաև ենթադրում են համագործակցություն՝ անվտանգության ոլորտի արդի խնդիրների, ինչպես նաև ֆինանսական կորուստների հանգեցնող բջջային կապի ցանցի միջոցով անօրինական և ցածրորակ տրաֆիկի փոխանցման դեմ պայքարի ուղղությամբ:

Հարկ է նշել, որ սույն թվականի մայիսի 16-ին Արձանագրության նախագիծը հավանության է արժանացել ԱՊՀ Տնտեսական խորհրդի տնտեսական հարցերով հանձնաժողովի կողմից, որից հետո ներպետական համաձայնեցում է անցել ԱՊՀ մասնակից պետություններում:

Ելնելով վերոգրյալից՝ «Բջջային շարժական կապի համակարգերի օգտագործման և զարգացման բնագավառում համագործակցության մասին» ԱՊՀ արձանագրության ստորագրումը գտնում եմ նպատակահարմար:

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ